600.0058.23.02.07

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

23 փետրվարի 2007 թվականի №58Ն
քաղ. Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2004 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 16-Ի №109Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 17-րդ հոդվածի 1-ին մասի է) կետը, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 5-րդ մասը՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը **որոշում է.**

1. Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2004 թվականի սեպտեմբերի 16-ի «Էլեկտրաէներգիայի (հզորության) առուվաճառքի և ծառայությունների մատուցման պայմանագրերի օրինակելի ձևերը հաստատելու մասին» №109Ն որոշմամբ հաստատված №5 հավելվածում «Էլեկտրաէներգիայի հաղորդման ծառայության մատուցման՝ բաշխող-հաղորդող պայմանագրի օրինակելի ձևում» (այսուհետև՝ պայմանագիր), կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումը.

1) պայմանագրի 3.1 կետը շարադրել նոր խմբագրությամբ.

«3.1. Հաղորդման ծառայության մատուցման սակագինը սահմանվում է Հանձնաժողովի կողմից:».

2) ուժը կորցրած ճանաչել պայմանագրի 4.4.2. ենթակետը, 9.4. կետի 3-րդ պարբերությունը և 9.9. կետը.

3) պայմանագրի 6.1 կետից հանել “հաստատագրված ամսական վճար՝ դրամ/ամիս” և «կամ նվազեցման դեպքում կիրառվող հավելավճարները» բառերը.

4) պայմանագրի 7.3 կետը շարադրել նոր խմբագրությամբ.

«7.3. Կողմերի միջև օպերատիվ փոխհարաբերությունները կարգավորվում են Հանձնաժողովի 2005 թվականի օգոստոսի 9-ի «Էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատորի և էլեկտրաէներգետիկական համակարգի լիցենզավորված այլ անձանց փոխհարաբերությունների կարգը հաստատելու մասին» №110Ն որոշմամբ հաստատված էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատորի և էլեկտրաէներգետիկական համակարգի լիցենզավորված այլ անձանց փոխհարաբերությունների կարգով և 2006 թվականի հունիսի 21-ի «Էլեկտրաէներգետիկական համակարգում էլեկտրաէներգիայի բաշխման և արտադրման, հաղորդման լիցենզիա ունեցող անձանց օպերատիվ փոխհարաբերությունների կարգը հաստատելու մասին» №112Ն որոշմամբ հաստատված էլեկտրաէներգետիկական համակարգում էլեկտրաէներգիայի բաշխման և արտադրման, հաղորդման լիցենզիա ունեցող անձանց օպերատիվ փոխհարաբերությունների կարգով»:

5) պայմանագրի 8.2. կետում «Հրազդանի ՋԷԿ» փակ բաժնետիրական ընկերության» բառերը փոխարինել «Հրազդանի էներգետիկ կազմակերպություն (ՀրազՋԷԿ)» բաց բաժնետիրական ընկերության» բառերով.

6) պայմանագրի 9.6. կետից հանել «(այդ թվում՝ տեխնիկական կորուստների մեծացումը)» բառերը և կետը «կողմից» բառից հետո լրացնել «Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով» բառերով.

7) պայմանագրի 14.2. կետում №6 “200--թ--- տեխնոլոգիական նորմատիվային կորուստների եռամսյակային ցուցանիշների գերազանցման (նվազեցման) համար տույժերի (հավելավճարների) հաշվարկման ակտ» հավելվածի վերնագրից հանել «(նվազեցման)» և «(հավելավճարների)»բառերը.

8) պայմանագրի №2՝ «Էլեկտրաէներգիայի հաղորդման ծառայության մատուցման սակագների մասին համաձայնագիր» հավելվածի 1-ին և 2-րդ կետերից հանել «Ծառայության հաստատագրված ամսական վճար____ դրամ/ամիս» բառերը.

9) պայմանագրի №6՝ “200--թ--- տեխնոլոգիական նորմատիվային կորուստների եռամսյակային ցուցանիշների գերազանցման (նվազեցման) համար տույժերի (հավելավճարների) հաշվարկման ակտ» հավելվածի վերնագրից հանել «նվազեցման» և «(հավելավճարների)», 5-րդ տողից հանել «հավելավճարը կամ» բառերը, իսկ հավելվածի 4-րդ տողը շարադրել նոր խմբագրությամբ.

«4. »Հրազդանի էներգետիկ կազմակերպություն (Հրազ ՋԷԿ)» բաց բաժնետիրական ընկերության էլեկտրաէներգիայի դրույքը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Ռ.ՆԱԶԱՐՅԱՆ

ք. Երևան
23 փետրվարի 2007թ.